

յորում Կաթողիկոսը կ'ըսէ, ի մէջ ալլոց՝ «Թող գիտնայ Ձեր եղբայրութիւնը՝ թէ մենք իմացանք որ Բոլոնիոյ Հայոց Արքեպիսկոպոսը, Նիկողայոս, Հռոմ գնաց մեր սըրբազնասուրբ Տիրոջ, Հռոմայեցիներու Պատրիարքին հրամանով, եւ հոն կը մնայ երկար ժամանակէ ի վեր. սակայն չենք գիտեր՝ թէ ինչո՞ւ, եւ կ'անգիտանանք՝ թէ արդեօք պիտի վերադառնայ: Այս պատճառաւ, մենք իբրեւ հովիւ եւ մշակ Քրիստոսի Եկեղեցւոյն մէջ, չուզելով որք թողուլ մեր ժողովուրդը Հայ Ազգին վրայ ունեցած մեր Պատրիարքական իշխանութեամբ եւ իրաւասութեամբ, զոր Ս. Սեղբեստրոսէն ստացաւ մեր փառաւորեալ Հայրը, Գրիգոր, իրենց հովիւ կարգեցինք եւ օծեցինք զայն (Վարդանովիչը), որպէսզի տեղապահն ըլլայ Նիկողայոս Արքեպիսկոպոսին, եւ ասոր մահէն ետք, իր յաջորդը: Արդարեւ չկրցանք կպիսկոպոսական պատուոյ արժանի ուրիշ մէկը ձեռնադրել եւ կարգել, բացի Թէոդորոս Վարդանովիչէն, որ օժտուած է վսեմ նկարագրով եւ սերած՝ ազնուական ծնողներէ, այր ժուժկալ եւ հմուտ, ծնած ու դաստիարակուած՝ Բոլոնիոյ Թագաւորութեան մէջ, մասնադէտ հռետորական եւ ազտուածարանական պիտութիւններու: Այժմ մեծ ակնկալութեամբ եւ սիրով զայն կը յանձնարարենք Ձեր նախախնամող Պաշտպանութեան հովանիին եւ կը խնդրէնք Ձեր Գերապաշտ ու մեծապատիւ եղբայրութենէն, որ անոր հանդէպ ցոյց տաք Ձեր սիրոյն եւ